ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

# Հ Ր Ա Մ Ա Ն

«12» հունիսի 2023թ. N 41-Ա

## ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻՆ ԿԻՑ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ԿԱՍԵՑՈՒՄԸ ՎԵՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 4-ի N 39-Ա հրամանի Հավելված 3-ի 1-ին և 2-րդ կետերը

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորված կազմակերպությունների համապատասխան գործունեության տեսակի, ենթատեսակների լիցենզիաների և ներդիրների գործողությունների կասեցումը 2023 թվականի մայիսի 4-ից համարել վերացված, մասնավորապես՝

1) «Շին-գրուպ» (ՀՎՀՀ՝ 08423125) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման N 17504 լիցենզիայի և լիցենզիային կից էներգետիկ ոլորտի N 17504-04 ներդիրի գործողության,

2) «Իջևանատուն» (ՀՎՀՀ՝ 07610726) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման N 17306 լիցենզիայի և լիցենզիային կից բնակելի, հասարակական և արտադրական ոլորտի N 17306-01 ներդիրի գործողության:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝

1) ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

5/12/2023

X

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ